

1905
ՔԵՏՐՈՒՄ
ԹԻԷ 4



Տ Ն Օ Ր Է Ն

Գ. ՄԵՃԱՏԱՌԻԱՆ

Երկրագործին համար գրեւ
աղքատին ողորմիչ ըսել է:

Ժ. ԳԻԴԺՕ

Fondée sous le Patronage
de Mr. E. DUCLAUX

Dirécteur: K. MEDZADOURIAN. 53 rue Boulard, Pars

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս

Հոդագործական Գիտական, Արուեստական

Ե. Տարի

Փետրուար

1905

ԳՈՒԹԱՆԻ ԴԵՐԸ

«Գութան»ի փետրուարի այս թիւով նոր շրջանի 14 հա. մարի չորրորդը տուած կ'ըլլանք: Այսուհետեւ ամենայն հանունաւորութեամբ, — ինչպէս անցեալ թիւով ծանուցած ենք, — մեր բաժանորդները ժամանակին պիտի ստանան թերթը:

1901ին հրատարակել սկսանք «Գութան»ը, բոլորովին աննպաստ պայմաններու մէջ, այն հաւատքով, որ պիտի ունենանք սառուար բաժանորդներու թիւ մը եւ յոգուտ շրջուած երկրագործ ու գիւղացի դասին բաժնեկրող հարուստներ:

Յուսախաբ եղանք, բայց չվնասեցանք: Շարունակեցինք մեր գործը, միմիայն մեր անձնական սուղ միջոցներով, ձեռնարկած օրէն իսկ բուռն համոզմունք մ'ունենալով որ ժամանակը պիտի կրնայ համոզել անոր անհրաժեշտ պէտքը եւ անվիճելի օգտակարութիւնը:

Հակառակ «Գութան»ի կցկտուր հրատարակութեան անիկայ որո: ցեր մ'ունեցաւ. —

Վուժան»ը տարածուեցաւ ո՛չ միայն Թուրքիոյ, Ռուսիոյ, Պարսկաստանի մէջ՝ այլեւ փնտռուեցաւ նոյնիսկ ամենահեռ ինկած եւ հեռաւոր երկիրներու հայ դաղթահաններէ :

«Վուժան»ը իր գործունէութեան չորս տարուայ ընթացքին մէջ . ո՛չ միայն տեսական, այլ եւ գործնական դոյութիւն մ'ունեցած է :

Իբրեւ թերթ՝ հանրամատչելի յօդուածներով երկրագործ ժողովուրդին հանաց ծանօթացնել այն Լեւիան եւ կարեւոր հարցերը . որոնց ուսուցումովը ընթերցողը կարող կըլլայ անմիջական օգուտներ ձեռք բերել՝ նուազ ապօքանքով ու զոհողութիւնով :

Իբրեւ գործնական օգտակարութիւն . — որ «Վուժան»ի ծածկուած եւ ամենամեծ դերն է եղած . — «Վուժան»ը ունեցած է մտաւորական եւ նիւթական զոհողութիւններու անվերջանալի շարք մը . ո՛չ միայն իր բաժանորդներու, այլ բոլոր իրեն գիմողներու հարցերուն . գրաւոր եւ լիակատար անգեկութիւններ , բացատրութիւններ , խորհուրդներ եւ աջակցութիւններ սուած է ո՛չ մէկ փոխարինութիւն պահանջելով :

Քանի քանի անգամ բնագաւառի զանազան կէտերէն օձի խայթումի դարմանը, վնասակար միջատներու եւ կենդանիներու բնաջինջ ընելու միջոցները հարցուած է . ըլլայ Թուրքիոյ, ըլլայ Կովկասի այգեպաններուն խորհուրդներ սուած եւ գործիքներ հայթայթած ենք՝ որթատունկի հիւլանցութեանց զէմ կոռելու համար : Բազմաթիւ երկրագործական մեքենաներու եւ գործիքներու քաթալոկներ մեր ծախսով զրկած ենք՝ քաջալերելու համար մեզ զիւրդները : Մեզ վիճակուած է յաճախ մեր հմտութեան սահմաններէն դուրս եղած հարցերուն պատասխանելու համար զոհողութիւններ ընել . դեղեր, անասնաբուժական գործիքներ եւ երկրագործական գրքեր, ժամագանառ ըլլալով, ուղարկելը չենք զլացած ուղողներուն :

Ո՛չ մէկ ճիգ չենք խնայած մինչեւ ցարդ . ո՛չ մէկ ճիգ չպիտի խնայենք ասկէ յետոյ այ՛ դլուխ համելու, սկսուած գործը, իջտկանացնելու համար մեր գծած ծրագիրն ու նըպատակը :

Չորս ամեայ փորձառութիւնը մեզ համոզնց եւ մեր համոզմունքի մէջ զմեզ ամրագնդեց, որ ոչ հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնը, ո՛չ մեր հարուստները, ոչ մեր բարեգործները չեն հետաքրքրուիր ժողովուրդի մեծամասնութիւնը կազմող երկրագործ եւ զիւղացի դասու վիճակով : Այդ ժողովուրդը ինք իր վրայ պէտք է գնէ իր վիճակը բարւոքելու յոյսը :

«Գութան»ը հոգազործ ժողովուրդի անկեղծ բարեկամը, ինչպէս անուանած է բժշկապետ Գ. Յ. Նաւասարդեան, իր գործունէութիւնն ու զոհողութիւնները պիտի շարունակէ՝ իր ցանած առողջ սերմերու պտղաբերութեանը վստահ հաւատքով :

ԳԱՐԵԳՐՆ ՄԵՍԱՏՈՒՐԵԱՆ



ԵՐԿՐԱԿՈՐԾԱԿԱՆ, ՀԱՄԱԶԳՒՍԵՒՆ ԷՆՍԴԻԴԻԻ ՄԸ

Սողոմոնի գրքին մէջ կը կարդայինք . թէ հոգի մշակութիւնը այն առաւելութիւնը ունի ուրիշ ամեն բաներու վրայ, որ թողաւոր մը անգամ ծառայեց զաշտերու :

Երեսուն դար վերջը թագաւոր մը կուգէ զբողի բոլոր այն խարճի երկրագործ դասակարգի վիճակի բարւոքման ու զայն հրազարտելու . կը յանձնէ թագակիրներու ուշադրութեանը :

Ազնիւ ու մարդասիրական նպատակի նախաձեռնութեան պատիւը կ'իյնայ Եղայիոյ թագաւոր Վիզգոր Էմմանուէլիին :

Ահա տասիկ նամակի թարգմանութիւնը :

==

Թագաւորի մը միտքը
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Հնում . Ծ վիտ . — Թագաւորը նախարարական ժողովի նախագահին, Պ. Ճիօլիտտիին հետեւեալ հեռագիրը ուղղած է .
Սիրելի նախագահ . վերջերս Միացեալ Նահանգացի քաղաքացի մը, սլարոն ճամբա լիւսպէն . կը ներկայացնէր ինձի խանդավառութեամբ մը, որ առաջ կուգայ հաստատ համոզմունքէ մը, միտք մը, որ ինձի լաւ եւ հեռասեռ կ'երեւայ . ատոր համար զայն կը յանձնարարեմ կտուարութեան ուշադրութեան :

Երկրագործական դասակարգերը, որ ընդհանրապէս աւելի շատ են ամեն տեղ, մեծ ազդեցութիւն ունին ազգերու վիճակին վրայ . բայց ապրելով առանց ռեւէ կապի, անոնք չեն կրնար հզօրապէս նուազեցնել զանազան մշակութիւններու ոչ բարու ոգի ման, ոչ ալ բաժանման, ոպառման պահանջներուն համ մատ . ոչ ալ իրենց հրապարակի շահերուն պաշտպանութեան, որոնք հողի ամենէն կարեւոր արտադրութիւններու համար, երթալով կըլլան ամենէն աւելի համաշխարհային :

Ուրիմն համազգային հիմնարկութիւն մը շատ օգտակար պիտի կրնայ ըլլալ . եթէ առանց քաղաքական ռեւէ նպատակի միտքը դնէ ուսումնասիրել երկրագործութեան միջոցները աշխարհի զանազան երկիրներու մէջ, նշանակելով պարբերաբար, մշակութիւններու շարք եւ որպիսութիւնը, այնպէս որ արտադրութիւնը կարելի ըլլայ գիտնալ, վաճառականութիւնը նուազ սուղ եւ աւելի գիւրին ըլլայ եւ զրներու սրոշումը աւելի հեշտ :

Համերաշխութեամբ քաղելով վանապան ազդերու այս նպատակին համար հաստատուած սենեակներու հետ, պիտի տար սրոշ տեղեկութիւններ երկրագործական գործերու վիճակին վրայ, ամեն երկիրներու մէջ, այնպէս որ կարեւոր ըլլալ դաղթակ սննդներու համար ապահով եւ օգտակար ուղղեցոյց մը :

Պետք է որ անիկայ միանայ պաշտպանելու համար բոյսերը ու կենդանիները հիւանդութիւններու դէմ: Մինչդեռ բաժանուած պաշտպանումը չի կրնար զանոնք խեղդել: Անիկայ ազէկ կերպով պիտի ազդէ երկրագործական գործակցութեանց, ապահովագրութիւններու եւ ազարակային վարկի ընդարձակման:

Այս տեսակ էնդիգիւ մը, որ բոլոր երկրագործներու միջեւ համերաշխութեան բերան մ'է եւ միեւնոյն դատողութեամբ խազաղութեան ուժով գործիք մը. բարերար արդիւնքները պիտի բաղմապատկէ:

Հոռմ պէտք է որ ըլլայ արժանի կեդրոնը համամիտ կառու վարութիւններու եւ զխաւսոր ընկերութիւններու ներկայացուցիչներու ժողովին. որպէսզի կառավարութիւններու ազդեցութեամբ՝ բոլոր երկրի երկրագործներու ուժեղ գործունէութիւնը համաձայն ընթանայ:

Ես կը յուսամ, որ նպատակի ազնիւութիւնը պիտի կրնայ յազթող հանդիսանայ ձեռնարկման դժուարութիւններուն:

Այս յոյսին մէջ, ուրախութիւնը ունիմ ըլլալ, ձեր շատ սիրելի քուզէնը:

ՎԻՒՊՕՐ ԷՄՄԱՆՈՒԵԼ

Հոռմ 24 Յունվար 1905

Այս նոր հաստատութիւնը, բոլոր ժողովուրդներու ստեղծած տնտեսական դրութիւնը փոխելու հաւակնութիւնը շունի, այլ պաշտպանելու իւրաքանչիւր երկրագործ ժողովուրդներու շահերը եւ տնտեսական յաւաքոյն դրութիւնը:

Քաղաքական տեսակետով, եթէ Եւրոպական միացեալ նահանգիմը հաստատութիւնը անիրականալի կը նկատուի իրականայի՛ն սակայն եւ թոպական բոլոր ազգերու Երկրագործական միութիւնը:

Անտարակոյս եւրոպական բոլոր յաղաքակիրթ ազգերը պիտի մասնակցին այս մեծ միութեան, որուն ստաջին քայլերը առին արդէն կայսեր ու թագաւորնիս, ուզելով վիքթոր Էմմանուէլի շնորհաւորական հեռագիրը եր:

Մագիստրոս որ այս հոյակապ միաքր գործադրութեան ճամբուն մէջ մտնայ եւ, դար ըէ ի վեր, դրկանքի, աղքատութեան, աղիտութեան մէջ տառապող զիւղացի ու երկրագործ գասակարգի անտանելի ու դժւարին վիճակը բարելուէ:

Գ. Մ.



Ոչխարի հօտին, այժի երամակին արժեքը կախում ունի հովուի կարողութիւններէն :

Իժմաստարար այս անուան արժանի կարող հովիւներ հազուադէպ են : Այս պաշտօնի զլուխը անցնելու եւ լաւ պայմաններու մէջ գտնուելու համար բազմաթիւ պայմաններ կան :

Այս արուեստին, ինչպէս ուրիշներու մէջ, պէտք չէ զատիչ արտաքին երեւոյթիւն . լաւ հովիւ ըլլալու համար հետեւեալն ցուպը, մարտազը եւ սրինգը բուսական չեն :

Ինչզերու մէջ, փոքրիկ հօտերը արժողները կամ տղաք կամ ձերբեր կըլլան, վերջինները նախ ընտրելի են. վասնզի իրենց փորձառութեամբ կրնան օգտակար ըլլալ :

Լաւ հովիւը պէտք է ըլլայ դորձուսեալ, արթուն, պէտք է ճանչնայ եւ սիրէ իրեն յանձնուած կենդանիներու ճալով անոնց սիրած կերակուրին եւ անոնց հետ քաղցրութեամբ վարուելով, պէտք է ինքզինքը ճանչցնել եւ սիրել սոյս անոնց, որպէսզի կարողանայ զիրութեամբ աւաջնորդել զանոնք :

Լաւ հովիւը պէտք է իր ոչխարներու տարիքը ճանչնայ, որպէսզի կարգադրէ զուզաւորութիւնները : Իր ոչխարներու յատկութիւնները ճանչնալու է, լաւ ընտրելու համար արտագրողները, խոյները նոխաղները եւ լաւագոյն ոչխարները :

Լաւ հովիւը միայն կրնայ զատել իր սոսաջնորդած կենդանիները իրենց գեղեցկութենէն, խառնուածքէն եւ ոյժէն :

Գիտնալու է թէ ի՞նչ խնամք պէտք է սոյս փոքրիկ կենդանիներու մանաւանդ ծննդաբնութեան ժամանակ. հսկելու է մայրերու, օգնելու է ծնելու՝ ատեն, մասնաւոր խրնամքներ սալու է նորածիններու. վերականգնանացնելու է, սոսաջին արկածներու զէմ երաշխաւորելու է մօր եւ ձագի

առողջութիւնը պահպանելու է :

Իսրի հովիւը իր ոչխարի բնութեան եւ սովորութեանը ծանօթ ըլլալով, ամէնաչնչին վրդովիչ նշանները պիտի նշմարէ, հիւանդութեան միջոցին, պիտի չեզոքացնէ հիւանդը տալով անոր նախնական խնամքները, որով շատ անգամ տարափոխիկ հիւանդութեանց առաջքը պիտի կրնայ առնել :

Անասնաբոյժական քանի մը տեսակ գործողութիւններ գիտնալու է. արիւն առնել, վէրք մաքրել կապել, պոչը կտրել, որձատումն եւն : Ասոնք թէեւ շատ պարզ գործողութիւններ են եւ անվտանգ, բայց պէտք է մաքրութեան խնամք տանիլ: Ոչխարը մորթել, քերթել ալ գիտնալու է :


Հովիւը դատել գիտնալու է մթնոլորտի մէջ եղած փոփոխութիւններէն գալիքը. նախատեսել փոթորիկն ու անձրեւը, որպէսզի ըստ այնմ առաջնորդէ հօտը :

Հովիւի տեղը նշանակելի է. անիկա անկախ է, ուղած եղանակովը կառաջնորդէ հօտը եւ շատ անգամ տիրոջ հրակողութիւնէն կը վրիպի. իրեն յանձնուած հօտը կարեւոր դրամազուլի մը կը ներկայացնէ, ուրեմն իրեն եղած վստահութեանը ըրտրովին արժանի անձ մը ըլլալու է :

Ընդհանրապէս խմբովին աւջեւէն կը քալէ հովիւը եւ անոր ձայնին կը հետեւին իր կենդանիները. շուները ոչխարի ետեւէն կը քայնն :

Գիւղական հովիւները չեն կրնար ձերբակալել, եթէ կանխաւ ապահոված չըլլան ոչխարի հսկողութիւնը, ոճրագործութեան մը պարագային անոր պահ տրուած հօտին համար պատասխանատուն կը մնան ձերբակալողները :

Գ.Ա.ՐԵԳԻՆ ՄԵՄԱՏՈՒՐԵԱՆ




ԱՐՄՏԻՔՆԵՐՈՒ ՀԻՒՆԷՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ց Ը Ր Ե Ն Ի Ժ Ո Ն Ք Ո Ւ Ս Տ Ը

Արմախրներու հիւանդութեանց ամենէն սարածուածը ժանգախտն է, որ յստաց կու գայ մակարայծ սունկէ մը :

Քեղնապոյն փոշին, արտն կարեւորութիւն չէր արուէր՝ հիմա եղած է գործնի վտանգաւոր հիւանդութիւն մը :




Ժանգախտը տարեկան հարիւրաւոր միլիոններու կորուստ կը պատճառէ :

Ընդհանրապէս ժանգախտը երեք տեսակ կ'ըլլայ եւ հանչցուած է «սեւ ժանգախտ», «գեղին ժանգախտ», «թռի ժանգախտ» :

Սեւ ժանգախտ. — Ստիկա մասնաւորապէս կը յարձակի ձիղերուն եւ տերեւներուն ծեղին փակած մասերուն. կը

Հունձքին սերմիկներէն մաս մը կ'իյնան հողին վրայ . մաս մը յարդին կցուած կը մնան . գետիկն ինկնողները յարդի գարնան կը ծլին : Հասուն սերմիկները հովէն տարուելով հիւանդութիւնը կը տարածեն :

Պատկերները ցոյց կուտան հիւանդութեան սերմիկներու զարգացման զանազան նմուշը :



Մեր ընթերցողին համար աւելի շահեկան է գիտնալ հիւանդութեան դարմանը .

ժանդախար ըսինք թէ՛ մի՞ն կորուստներ կը պատճառէ . զգալի կերպով կը նուազեցնէ հունձքը . փոշիով աղտոտած յարդը ալ չի կրնար կենդանիներու արուել իբրև սնունդ , վասնզի ճանչցուած է , որ մարսողական գործարանները

զարգանայ, ցորենի և ծորենիի վրայ :


Այնուհետև գարնան կը զարգանայ ցորենին վրայ . յարձակուածներուն վրայ կը տնտնուին նարնջագոյն բշտիկներ . հիւանդ ցորենները տկարանալ կը սկսին :

Եթէ բշտիկները պատուին, մէջէն հ'ելլէ առատ գեղին փոշի մը, որ մեքրոսկոպով քննուելով կը տեսնուի վերի պատկերը :

Հին հոսմայեցիները կ'ըսէին թէ, ժանգախտը յառաջ կուգայ առաք ու պազ գիշերներու յաջորդութենէն . Շուտացի դիտնական մը հաստատած է թէ, հիւանդութիւն առածող սերմիկները ցուրտի մէջ աւելի կը զարգանան :

Տասը տասներկու օր առաջ վարակած մը իր կարգին կը դառնայ վարակման կեդրոն մը :

Մինչև եղանակի վերջը սերմիկներով վարակումը տես-




դի կուեննայ . բայց երբ հասկերու մէջ ցորենը կը կազմուի ու քիչ տեսակ լւծով սերմեր կը կազմուին . որոնք հիւանդութեան շարունակելիութիւնը կը պահպանեն զէջ հղանակներու մէջէն անցնելով :

գրգռող յատկութիւններ ունի, զժուարամարտութիւն . նոյն
խնկ խիթեր կը պատճառէ արեան բազազրութիւնը կ'ապա-
կանէ եւ պատճառ կը գտնայ ծանր հիւանդութեանց . ինչ-
պէս ամխօզոսի . անդատքի եւ ձիաքոսի :

Լատագոյն գեղը զանդառով դարմանումն է . բայց գոր-
ծածութիւնը զժուար կ'ըլլայ . երբ ցորենները կանանչ
կ'ըլլան եւ անկարելի երբ արդէն նաակ կը կապեն :

Իսաւաղիքը երկաթի ձծրատ կը գործածեն . սակայն
ստացուած արդիւնքը դեռ վերջնական չէ :

Առայժ պէտք է սերմը ընտրել վաղահաս եւ ժանդախտի
ենթակայ շեղող ցորենի տեսակներէն :



Խնամով վարել . հերկել հողերը, արժատախել ընել գէշ
խոտերը . խոնառութեան պատճառները ջնջել :

Արտերու մօտերը գանուած ծորենիները ջնջել, որոնք
հիւանդութիւնը կը սնուցանեն :

Կրնայ ըլլալ, որ սերմնացու ցորենները վարակուած ըլ-
լան, այդ պատճառով պէտք է գործածել միայն բոլորովին
մաքուր, աղէկ նասուն չամքած պարարտ սերմեր :

Ինչպէս որ ինչ առթիւ բոսած ենք . լաւ կ'ըլլայ սերմը ցա-
նել : առաջ կրախտանել եւ ձմերուտել :

ԲՈՅՍԵՐՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

==

Որո՞ւ մտքէն կանցնի թէ՛ մեր ամեն օրեայ սպառած բան-
ջարեղէնները եւ կանանչները , եթէ մասնաւոր եղանակով
մը պատրաստուին եւ յարմար ժամանակին գործածուին , ա-
նոնք բժշկիչ յատկութիւնները ունին :

Կանկար (էնկինար)ը իր պատուական յատկութիւններուն
համար յարգուած բանջարեղէն մ'է . տենցի , դողի եւ վառ-
ումար ջերմերու առաջը առնելու համար ալ ազդեցիկ դեղ
մ'է . տեղեր կան , ուր կանկարի տերուները՝ չորցնելէ եւ
փոշիի վերածելէ ետքը կը գործածեն իբրեւ տենդահալած ,
մէկ լիտր ջուրի մէջ 15-30 կրամ չոր կամ կանանչ տերեւ
եփելով ալ նոյն փոշիէն կը պատրաստեն օշարակ :

Կանկարը ոչ միայն տենտածալած օգտակար է , այլ կը գոր-
ծածուի գեղնութեան եւ անքնութեան դէմ . այս պարագա-
յին , արմատը պետք է եփել ճերմակ գինիի մէջ ու խմել :

Լախուր (քէրէվիզ)ը ընդհանրապէս քիչ կը գործածուի ,
սակայն առողջարար եւ ճաշակաւոր բանջարեղէն մ'է . իր-
ական միզեցուցիչ յատկութիւններ ունի եւ լաւ ախոր-
ժակ բացող մ'է :

Կուտերը փկաոյժ ու գրգռող են :

Ազատքեղ—մազտանոսը— գրեթէ վերոյիշեալին գրգռող
եւ միզեցնող յատկութիւնները ունի . ասոր գործածութիւ-
նը շատ օգտակար է ոչ միայն կերակուրներու հետ կրնայ
գործածուիլ այլ իբրեւ թթու :

Ստեպղին—հավուճը—պատուական սնունդ մ'է եւ աշխար
հի ամեն կողմը ասարածուած անոր առաքինութիւնները
ճանչցուած ու գնահատուած են շատ բժիշկներէ . ոյժով կը
յանձնարարեն մանաւանդ լեարդի հիւանդութիւն ունեցող-
ներուն :

Վիշիի մէջ գլխաւոր կերակուրը ստեղծինով կը պատ-
րաստուի եւ ամէն օր հիւանդներու կը տրուի :

Ըսողներ կա՞ որ շատ ստեղծին ուտող մարդոց մազերը
գեղեցիկ փայլ մը կը ստանան եւ մետաքսի կը նմանին :

Որքին (dartre թէմրէյի) պատճառած տաժանիկի ցաւե-
րուն ու անտանելի քերվառքներու դէմ լաւագոյն դարման
մ'է. հոմատեղի'նը կը ճղմնն կամ կը խարտեն եւ հիւանդ
տեղի' վրայ կը դնեն :

Ջրկոտեմ (սուլթէբի) ճղմուելով կը պատրաստուի ըմպե-
լիք մը, որ շատ օգտակար է լեարթի հիւանդութիւն ունե-
ցողներուն :

Կան բժիշկներ, որ դարնան, մասնաւոր զատրաստութիւն
մը կուտան հիւանդներու լեարդի ցաւերու առաջը առնե-
լու նպատակով :

Ջրկոտեմ, դեռ շատ մը յատկութիւններ ունի. լաւ ա-
խորժակ բացող է. միղեցուցիչ մը, մաքրիչ մը, մաղաւթափ
մը. կուրծք մաքրող մ'է, բայց ջիղերու տկարութիւն եւ
գրգռում ունեցողները պէտք չէ ունեն :

Ստամոքսի հիւանդութիւն ունեցողներու ամհնէն շատ
յանձնարարուած բանջարեղէնը սպանախն է. նրբաճաշակ,
գիւրամարս կանտնչ մ'է եւ ամենափափուկ ստամոքսներն
անգամ կրնան մարսել. զովացուցիչ յատկութիւններ ալ ու-
նի սպանախը :

Հիւանդ ստամոքսներու համեղ թանկագին բանջարեղէնը
սպան է. կը դործածեն մանաւանդ շանոր ճղմուածը տկա-
րակազմ ստամոքս ունեցողները :

Բագուկ (փազը) բուժիչ շատ մը յատկութիւններ ունի,
անոր տերեւը խաշելով կակղացնող է, աղիքներու բորբոք-
ման դէմ կը դործածուի եւ պալարներու վրայ կը տրուին
իրենց զովացուցիչ յատկութեանը վրայ :

Մներեկ (քուշքոնմաղ) մեղեցուցիչ եւ ամաքիչ յատկու-
թիւններ ունի, միաժամանակ ախորժակ կը բանայ, ներ-
քին հիւանդութեանց, եւ հարբուխի դէմ ալ կը դործածուի.
արմատներն ալ միղեցնող են բողբոջները իտրաի բարբառումը
եւ արեան շրջանը կը կանոնաւորեն :

արտի քարտիսումը եւ արեան չրջանը կը Լանոնաւորեն :

Ճակը անողջարար եւ զովացնող է :

Եզերդ (հինարկա)ր բողմտտեսակ է, սէնտահայած, մաքրիչ, լուծիչ, զովացուցիչ յատկութիւններ ունի :

Լեզի եւ վայրենի՝ եզերչը աւելի զօրաւոր է եւ այլ պատճառով աւելի յարի է :

Նախկին մարդիկ կազմքին կ'ուտային անողջապանիկ մեծ յատկութիւններ, Հոռոմայեցոց գեղեցիկ կազմը կը վերադրեն կազմքի առատ գործածութեան :

Գիւղացիք ծմն առնն մեծ քանակութեամբ կազմք կը սպառեն, անողջարար ուտելիք մ'է մանաւանդ անողջ մարդոց համար :

Ճկար սամոքաները երբեմն զժուարութեամբ կը մարսեն :

Կարմիր կազմքը կուրծք կակուղցնող է :

Նախապաշարում է՝ թէ՛ կազմքը պարարտ եւ զժուարամարս է, պատրաստութեան եղանակն է պարարտութեան պատճառը :

Ոլորտ փափուկ աղիք ունեցողներու համար կը յանձնարարուի. կարելի է ասով խիւս շինել փոխանակ վուշի կուտի որ պարարտէ :

Լուրիան շատ լաւ սնունդ մ'է, բայց պետք է խնամքով եփել :

Կանանչ լուրիան իբ պատեանին պատճառաւ զժուարամարս է եւ կրնայ անախորժ հեռեւանքներ թողուլ փափուկ աղիքներու վրայ :

Դիւրագրգիռ եւ կաթուածով կազմուածքի աները շատ լաւ ուտելով կ'օգտուին. յողացաւներ ամէն օր ուտելով բժշկուած են. կը յանձնարարուի նմանապէս լեարդի հիւանդութեանց դէմ :

Հազարը (մարուլ) ամոքիչ է, քնանալու կը նպաստէ, ծարուր կանցնէ, տերեւներովը խիւս, լափա կը շինուի :

Սեխը պէտք է ուտել տաքերու ատեն. շաքարոտ համին պատճառով զովացնող եւ ստամոքսին հաճելի է աւելի ոյշ :

ատեն ընդհակառակը գրգռող է եւ կրնայ ստամոքսի ցաւերու ու ջերմի պատճառ ըլլալ :

Սոխը գրգռող մեղմացուցիչ եւ ճճխասպան սննունդ մ'է :

Շողգամը կը յանձնարարուի իր ամբացուցիչ յատկութիւններուն համար :

Թթուկիջը եւ ազատգեղը մեղմեցնող են, եթէ թթուկիջ մատղաշ ըլլայ, բարեխառնող, զովացնող եւ մարսեցնող յատկութիւններ ունի. եթէ մեծ եւ կարծր ըլլայ շատ մը ստամոքսներ չեն կրնար տանիլ :



Հաւերու միսը անցնող

Մէկ տարեկանէն վեր եզող հաւերու կողի աղուափետուրը եւ երակները կ'անհետանան. միսը անփայլ չոր եւ քիչ մը ալի. բոտ ճերմակութիւն մը կը ստանայ :

Ածած հաւի սրբանը շատ լայն կ'ըլլայ, չածողինը բոլորովին սեղմուած. այդ գործարանը այն ժամանակ լայնալ կը սկսի՝ երբ վառեակը անցու կ'ըլլայ :

Թոչուններու միսը կը ճանչցուի յետագայ մէկ քանի յատկութիւններէն .


Դեղին թաթիկներ ունեցող հաւերու միսը ընդհանրապէս կարծր կ'ըլլայ, ոսկորնին հաստ եւ ծանր, իւղերնին դեղին եւ հաղուադէպ է որ մորթն ալ գեղին չերեայ :

Կոչէնչինի եւ Պրահմափուտրաի տեսակներուն մէջ՝ իրաց տոեալ դեղին եւ կանանչ թաթիկները՝ մնացեան ժերը՝ սեւէն սևեալ մինչեւ ճերմակը՝ պատուական միսի նշաններ են :

Երբ մորթի հիւստեածքը նուրբ, փափուկ եւ տարածուն է, մորթի գոյնը վարդագոյն եւ սատափագոյն է. կարելի է վստահ ըլլալ որ այս յատկութիւններ ունեցող հաւը կրնայ գիրնալ :

Միացեալ նահանգներու արմտիքի հունձքը
Պաշտօնական տեղեկութիւններէ կիմադուի, որ Միացեալ
Նահանգներու ցորենի բերքը եղած է՝ 1904ին, 146,524,660
կենտինար, անցեալ տարուանէն 27 միլիօն կենտինար
նոստազ • 1897 էն իվէր այսքան պակաս հունձք ըրած չէին
այս նահագները որուն պատճառը եղա՝ են դարնաւային
չափազանց առատ անձրեւները :

Եգիպտացորենի բերքը եղած է 677 միլիօն կենտինար ան-
յեալ տարիէն թիչ մը բարձր վարսակիրնր եղած է 235 միլիօն
կենտինար : Արմտիքի տեւտուրին համար անախորժ անա-
կնկալ մ'է այս լուրը :



Charrues à Vapeur
Locomotives à Vapeur
Camions à Vapeur
Tomberaux Routières
Rouleaux des Routes à Vapeur

De construction parfaite et d'une solidité à toute épreuve,
sont livrés des prix excessivement réduits par

JOHN FOWLER & CIE.

MAGDEBOURG
Allemagne

Շոգեչարժ արօրներ

Պողոտաներու շոգեչարժներ

Շոգեչարժ սայլակներ

Պողոտաներու շոգեչարժ լողեր

Փորձուած տոկունութեամբ եւ բնտիր չէնքով՝ կը
զրկուին ամենաժան գներով Գերմանիոյ Մալտըսուրկի
ԺՕՆ ՖՕՎԼԵՐ Ընկերութեան կողմէն :

«Փութան»ը՝ այս թիւով՝ նոր Շրջանի շորորդ թիւը
տուած կ'ըլլայ : Մեր բաժանորդներէն անոնք որ իրենց
հին հաշիւները չեն կարգադրած , ինչպէս անոնք որ մինչեւ
այսօր ուշացուցին նոր շրջանի բաժնեգնի վճարումը՝ կը
խնդրենք որ փութան իրենց հաշիւները կարգադրել :

K. MEDZADOURIAN
53 rue Boular, PARIS.